


**Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորի եզրակացություն**

**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ**

**«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ**

**Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում ծրագիր  
Վարկ թիվ 8495-AM**

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված  
տարվա համար



# Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն	8
Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն	9
Հատուկ հաշվի հաշվետվություն	10
Հատուկ հաշվի հաշվետվություն	11
Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

## Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ  
ՀՀ, ք. Երևան 0012  
Վաղարշյան 8/1  
Հ. + 374 10 260 964  
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC  
8/1 Vagharshyan Str.  
0012 Yerevan, Armenia  
T + 374 10 260 964  
F + 374 10 260 961

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի  
բաժնետիրոջը

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկի (ՎՋՄԲ) 8495-AM վարկային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող «էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի համար (այսուհետ՝ «Ծրագիր») ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները, Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը, հատուկ հաշվի հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար, ինչպես նաև ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով, կից ծրագրի ֆինանսական հաշվետվությունները տալիս են «էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված ֆոնդերի և ճանաչված ծախսերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկի ուղեցույցների, 8495-AM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների:

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ից և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ից (Ընկերություններ)՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### *Հանգամանքների շեշտադրում*

- Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ղեկավարությանը՝ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:
- Մենք ուշադրություն ենք հրավիրում ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 11-ին, որտեղ ներկայացված են Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակի փոփոխությունները: Չնայած ներկա պահին առկա է որոշակի քաղաքական անկայուն իրավիճակ՝ Ընկերությունների ղեկավարությունը գտնում է, որ այդ գործընթացները չեն կարող նշանակալի ազդեցություն ունենալ Ծրագրի գործունեության, ուղղության և շարունակելիության վրա, և ղեկավարության գնահատմամբ՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտվող տարվա Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ճշգրտելու որևէ անհրաժեշտություն չկա: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

### *Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար*

Ընկերությունների ղեկավարությունը պատասխանատու է սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև 8495-AM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների համաձայն պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

### *Աուդիտորի պատասխանատվությունը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ծրագրի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

